ԱԴՐԲԵՋԱՆԻ «ՄՈՒՍԱՎԱԹ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԻՍԱ ԳԱՄԲԱՐԸ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ Է «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ՌԱԴԻՈԿԱՅԱՆԻ ԹՂԹԱԿՑԻ ՀԱՐՑԵՐԻՆ:

(Տպագրվում է կրճատումներով)

- Վերջին ժամանակներս Ադրբեջանում նկատվում է որոշակի քաղաքական «համբերատարություն»: Կարելի՞ է արդյոք ասել, թե արդեն հող է ստեղծվել ազգային համերաշխության կամ ազգային միասնության համար:

Ի.Գ. - Ոչ, այդ մասին տրակավին վաղ է խոսել: Եկեք ինքներս մեզ չխաբենք: Ադրբեջանում առայժմ ազգային համերաշխություն գոյություն չունի: Պարզապես պետք է համեմատել այն ժամանակվա եւ ներկայիս ընդդիմադիր ուժերը, եւ այդ դեպքում պարզ կլինի, որ այն ժամանակ քաղաքական ընդդիմությունը պաշտպանում էր խռովարարների ռազմական գործողությունները եւ գործնականում միացել էր խռովությանը: Իսկ ներկայիս ընդդիմությունը պետության, ժողովրդի շահերը վեր է դասում ամեն ինչից, ուստի եւ մտադիր չէ պաշտպանել որեւէ ուժի բռնի գործողությունները:

- Իշխանության փոփոխությունը տեղի է ունեցել հատկապես 1993թ. հունիսի 4-ի իրադարձությունների հետեւանքով. այժմ շարունակվում է այդ առթիվ դատավարությունը...

Ի.Գ.- Այստեղ ամեն ինչ գլխիվայր շուռ է տրված: 93-ի հունիսին տեղի է ունեցել խռովություն, որն ավարտվել է խորհրդարանային հեղաշրջմամբ: Դա պետական հեղաշրջում էր: Այժմ հաղթողները ցանկանում են դատել պարտվածներին: Սակայն գործն ակնհայտորեն դեմ է հաղթողներին, եւ դատավարության ընթացքում բացահայտված փաստերից սկսել է պարզվել, թե ինչքան դժվարլուծելի է պարտվածների ամբաստանության հարցը: Ընդհակառակը, դատարանի դահլիճում պետք է փոխվեն մեղադրյալները, իսկ դա, բնականաբար, լուրջ դժվարություն է հարուցում կառավարական շրջանակներում: Ուստիեւ փոխվել է դատավարական կազմը, մեկ պետական մեղադրողի փոխարեն ի հայտ են եկել երեքը, եւ ճառաջին իսկ օրվանից դատավորի կողմից տեսանկարահանումների արգելումը ցույց է տալիս, որ փորձելու են դատավարությունը տանել այլ ուղղությամբ:

Ո՞վ էր ղեկավարում խռովությունը, ո՞վ պիտի նստի մեղադրյալի նստարանին, կարեւորը դա չէ: Խոսքը վերաբերում է արդարության եւ ճշմարտության վերականգնմանը, բուն հեղաշրջմանը, որն Ադրբեջանը հասցրել է ճգնաժամի: Պետք է ճանաչվի հեղաշրջումը: Մարդիկ, որոնք իշխանության են եկել հեղաշրջման միջոցով, պետք է գիտակցեն, որ այդ ճանապարհով ոչ մի բանի չեն կարող հասնել: Հունիսի 4-ի իրադարձությունների գնահատումն ու այդ խռովության իրավական եւ քաղաքական հետեւանքների վերացումը կարող են պայմաններ ստեղծել առկա ճգնաժամից Ադրբեջանի դուրս գալու համար:

- Իսա բեկ, ինչպե՞ս եք վերաբերվում խորհրդարանային ընտրություններին: Վերջերս կենտրոնական թեւի կուսակցությունները ընդդիմադիր ուժերին կոչ են արել միասնության՝ հանուն խորհրդարանային ընտրությունների անցկացման:

Ի.Գ. - Ընտրությունների նկատմամբ իմ վերաբերմունքը, իհարկե, դրական է, այսինքն դրանց բնականոն անցկացման համար պահանջվում է, որպեսզի բոլոր ուժերը հասնեն որոշակի համաձայնության:

Այսօրվա խորհրդարանը ի զորու չէ կատարելու իր աշխատանքը, եւ Ադրբեջանն իրոք ժողովրդավարական ուղիով ընտրված խորհրդարանի կարիք ունի: Սակայն շատ դժվար է ասել, թե արդյոք հնարավոր կլինի՞ դրանք անցկացնել: Այստեղ առկա են նաեւ առարկայական պատճառներ. Ադրբեջանի տարածքի մեծ մասը բռնազավթված է, մեծ թվով բնակիչներ փախստական են, իսկ հանրապետությունը պատերազմական վիճակում է: Այս պայմաններում այնքան էլ հեշտ չէ խորհրդարանային ընտրություններ անցկացնել:

Կան նաեւ ենթակայական պատճառներ, իշխանության գլուխ գտնվող մարդիկ կփորձեն այնպես անցկացնել ընտրությունները, որ դա էլ ավելի կշիկացնի կացությունը, ինչը կարող է առավել խորացնել ճգնաժամը:

Մենք կցանանք դա թույլ չտալ:

- Հետաքրքիր է իմանալ Ձեր կարծիքը Ադրբեջանի տնտեսական կացության եւ ելքի ուղիների մասին:

Ի.Գ. - Տարվա ընթացքում չի իրականացվել ոչ մի տնտեսական բարեփոխում, չեն յեռնարկվել անհրաժեշտ միջոցներ բնակչության նվազագույն պահանջմունքները բավարարելու համար: Ակնհայտ է աշխատավարձի մակարդակի եւ մնալը մանաթի արժեզրկման արագությունից եւ սպառողական զամբյուղի ծավալից: Եվ եթե նկատենք, որ երկար ժամանակ աշխատավարձ չի վճարվում, ապա կարելի է պատկերացնել, թե ինչ կացության մեջ է բնակչությունը:

Միայն վերջին շաբաթներին է, որ Ազգային մեջլիսում արագացվել է տնտեսական օրենքների ընդունման հարցը: Իսկ դա, ըստ երեւույթին, առնչվում է սեփականաշնորհմանը վերաբերող խոսակցություններին: Այսինքն կառավարական շրջանակները մտադիր են կարճ ժամկետում հապճեպ սեփականաշնորհում անցկացնել: Իսկ դրա համար անհրաժեշտ է ընդունել մի շարք օրենքներ, ինչով եւ բացատրվում են այդ օրենքները խորհրդարանում ընդունելու շտապողական ջանքերը:

Մենք լիովին պահպանում ենք սեփականաշնորհումը: Սակայն դեռ հարց է, թե ինչպե՞ս այն կիրականացվի: Ինչո՞ւ մեկ տարվա ընթացքում սառեցվեց Աբուլֆազ Էլչիբեյի իշխանության օրոք մշակված սեփականաշնորհման պետական ծրագիրը: Իսկ այժմ, տնտեսության մեջ որոշակի խուսանավումից հետո, սեփականաշնորհման ծրագիրը ջրի երես է ելել արդեն նոր տեսքով:

Հարկավոր է իրականացնել կարճաժամկետ եւ երկարաժամկետ միջոցառումներ: Որպես կարճաժամկետ միջոցառում, անհրաժեշտ է վերացնել կառավարական շրջանակներում կաշառակերությունը: Ինչքան էլ մեծ լինեն Ադրբեջանի հնարավորությունները, դրանք այնքան չեն որպեսզի բավարարեն բնակչության պահանջմունքները եւ... հարստացնեն իշխանության գլուխ գտնվող մի խումբ մարդկանց: Հարկավոր է ընտրել երկուսից մեկը: Ներկայիս իշխանությունները ընտրել են երկրորդը մտածում են իրենց հարստության մասին, զբաղված են Ադրբեջանի հարստությունը փոշիացնելով, կապիտալը արտասահմանյան դրամատներ փոխանցելով: Բնականաբար, նման պայմաններում չի՞ կարող խոսք լինել տնտեսության վերականգնման եւ բնակչության ապահովման մասին:

- Հետաքրքիր է լսել ձեր դատողությունները հայ-ադրբեջանական հակամարտության լուծման ուղիների մասին: Ի՞նչ սկզբունքների հիման վրա պետք է լուծվի այդ հակամարտությունը: Դրա շնորհիվ ինչի՞ պետք է հասնի Ադրբեջանը:

Ի.Գ. - Գոյություն ունեն միջազգային չափանիշներ եւ սկզբունքներ: Որպես կիրառելի, մենք առանձնացնում ենք դրանցից երկուսը: Առաջինը սահմանների անփոփոխելիության սկզբունքն է, երկրորդը ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին հարցը: Խաղաղության պայմանագիրը պետք է կնքվի այդ սկզբունքների հիման վրա, եւ պատերազմը պետք է դադարեցվի: Ես հուսալի ոչինչ չեմ սպասում այս ասպարեզում: 93-ի հունիսին իշխանության փոփոխությունից հետո քիչ էր մնում, Ադրբեջանը դառնար պարտված երկիր: Նման պարագաներում Հայաստանը թելադրում էր իր պայմանները, ընդ որում, ինչն այնքան տարօրինակ է, Ադրբեջանի կառավարությունը ընդունում է Հայաստանի պայմանները եւ, ճանաչելով որպես հակամարտության կողմ, հաշվի է առնում Լեռնային Ղարաբաղի պայմանները, ինչպես նաեւ քննարկման առարկա են դառնում Ռուսաստանի պայմանները:

... Աբուլֆազ Էլչիբեյի ղեկավարության օրոք Ադրբեջանի համար այսքան ծանր չէին պայմանները: Այն ժամանակ մենք էինք թելադրում առաջարկությունները եւ շատ դեպքում հասնում մեր ուզածին: Մենք հաշվի չէինք առնի մի փաստաթուղթ, որը նկատվում է Ադրբեջանը: Դա կլինի ոչ թե խաղաղություն,այլ Ադրբեջանի պարտություն: Եվ, բնականաբար, ոչ ադրբեջանական ժողովուրդը, ոչ էլ այն մարդիկ, ում համար սուրբ են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունն ու անկախությունը, օրինական չեն համարի այդ փաստաթուղթը: Դա պետք է հաշվի առնեն եւ ներկայիս կառավարական շրջանակները, եւ արտաքին ուժերը, որոնք Ադրբեջանին դրդում են ստորագրելու այս նվաստացուցիչ պայմանները:

- Ձեր վերաբերմունքը տարածաշրջան ռազմական ուժերի մտցնելու նկատմամբ:

Ի.Գ. - Դա անցանկալի է: Լավ կլիներ, եթե բացառվեր Ադրբեջան արտասահմանյան ուժեր մտցնելու անհրաժեշտությունը: Պետք է Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարությունների միջեւ վստահության այնպիսի մակարդակ ստեղծել, որպեսզի երկու կողմն էլ երաշխավորեն պայմանագրի պահպանումը: Այդ դեպքում ռազմական ուժեր մտցնելու անհրաժեշտություն չէր զգացվի, բավական կլիներ դիտորդների ժամանումը: Իսկ եթե մենք ստիպված լինենք, ապա, բնականաբար, կգերադասենք, որ այդ ուժերը Ադրբեջան ժամանեն ՄԱԿ-ի որոշմամբ, տարբեր երկրների ներկայացուցիչների առկայությամբ:

Պատրաստեց

ԳՐԻԳՈՐ ՍԻՄՈՆՅԱՆԸ

«ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՆ ԱՄԵՆԱԱՆՑԱՆԿԱԼԻ ԻՐԱԳԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ»